ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Դ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Աղատագրական ակնկալիքներով լեհ-հայկական շփումները սկսվել են դեռևս XVI դ. լեհական Սիգիզմունդ II և Ստեֆան Բատոր թագավորների ժամանակներից։ Այդ շփումները որոշակի բանակցություններ տեսք են ստանում Փիլիպպոս կաթողիկոսի օրոք[1]։ Փիլիպպոս կաթողիկոսի հաջորդներից Հակոբ Ջուղայեցու, հատկապես Նահապետ Եղեսացու, օրոք Հայաստանի ազատագրության վերաբերյալ հայ-լեհական բանակցություններն արդեն վերածվում են քաղաքական զինակցության[2], որի վավերագիրը լեհական թագավոր Յան III Սոբեսկու 1696 թ. հունիսի 2-ի լատիներեն նամակն է՝ ուղղված Նահապետ Եղեսացի կաթողիկոսին։ Այդ նամակը մեզ է հասել լեհահայ նշանավոր պատմաբան Սադոկ Բարոնչի շնորհիվ։ Նամակը ոչ միայն հաստատում է հայ ազատագրական շարժման հայ-լեհական շփումների տվյալները, այլև լրացնում ու ճշգրտում է դրանք։

Կորած այդ փաստաթուղթը տպված էր Լվովի «Ջեննիկ լիտերացկի» (Գրական թերթ) լեհերեն շաբաթաթերթի 1854 թ. 21—22 համարներում՝ Բարոնչի ստորագրած «Սոբեսկին և հայերը» ընդարձակ հոդվածում, իբրև տողատակի ծանոթություն։ Ս. Բարոնչը այդտեղ նշում է, որ նամակը տպագրվում է Լվովի հայոց թեմական խորհրդի դիվանում պահվող պատճենից։ Փաստաթղթի համառոտ բովանդակությունը նա բերում է իր «Ուրվագծեր հայոց պատմության» լեհերեն շատ արժեքավոր գրքում[3]։ Նամակի բովանդակությունը բերում է նաև լեհ պատմաբան Վլ. Լոգինսկին իր մի աշխատությունում[4], որտեղից Հ. Ջավրյանը թարգմանել ու հրատարակել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում՝ առաջին անգամ այն ծանոթացնելով հայ պատմագիտությանը[5]։ Փաստաթուղթն ամբողջությամբ հայերեն է հրատարակել պատմաբան Մ. Հովհաննիսյանը[6]։

Նամակը Հայաստան է հասցրել Սոբեսկու հայազգի քարտուղար, ատվածաբանության դոկտոր Շիմոն Բեգրոսովիչը։ Թեև այդ կարևոր ու արժեքավոր նամակը մինչև վերջերս ամբողջական տեսքով անծանոթ էր հայ պատմագիտությանը, բայց դրա մասին բավական խոսվել է։ Օրինակ՝ Աշ. Հովհաննիսյանն այդ առիթով գրում է. «1696 թ. Սոբեսկին հատուկ նամա-

---

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան 1972, էջ 93, 126, Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959, էջ 200—352, Արշակ Ալպոյաճյան, Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հապեշստան ԺԷ դարուն, Կահիրե, 1946, էջ 63 և Լ. Բաքայեան, Հայերը Մոլդաւիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 24, 31։

2 Դ. Համբարձումյան, Հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշման ու լեհահայերի՝ Հռոմի հետ միության փաստերը լեհ պատմագրության մեջ (Հանդես ամսօրյա, 1985, № 1—12, էջ 247—314)։

3 Sadok Baracz, Sobecki i Ormianie (Dziennik Literacki, Lwow, 1854, № 21—22), նույնի՝ Rys dziejow ormianskich, Tarnopol, 1869, s. 69—70 (այսուհետև՝ Ս. Բարոնչ, Ուրվագծեր)։

4 W. Lozinski, Patryciat i mieszczanstwo lwowskie w XV—XVII. wieku, Lwow, 1902.

5 Հայրենիք, 1929, № 6, էջ 129—131։

6 Բանբեր Երևանի համալսարանի, 1978, № 1, էջ 153—156։

կով Սիմոն Պետրոսովիչին ուղարկեց շահի և Էջմիածնի Նահապետ կաթողիկոսի մոտ։ Նամակում նա հորդորում էր կաթողիկոսին՝ միանալ կաթոլիկ եկեղեցուն և խոստանում դրա համար պապի, կայսեր և իր օգնությունը... Լեհական աղբյուրներից տեղեկություն է հասել, թե Սոբեսկին առաջարկած է եղել Նահապետ կաթողիկոսին ցույց տալ իրեն այն ուղին, որով ինքը կարող կլիներ աջակցել հայ ազնվականներից մեկին՝ վերականգնելու հայերի անկախությունը և նստելու հայ թագավորների գահին»[7]։ Նա որպես աղբյուր հղում է Բարոնչի «Ռբս Ջեյով Օրմիանսկիխ» աշխատությունն ու «Պոսլանիեց» հանդեսը և նշում. «Այս աղբյուրները անձամբ տեսած չունենք, տեղեկանքը քաղում ենք Հ. Քյուրտյանի հոդվածից»։ Հ. Քյուրտյանի միջոցով Աշ. Հովհաննիսյանի աշխատության մեջ թափանցած այս տեղեկությունների մեջ սխալներ կան, որոնք ճշտվում են դիվանական աղբյուրներից քաղած Բարոնչի տվյալներով։ Նախ՝ Հ. Քյուրտյանը, ինչպես նաև Ար. Ալպոյաճյանն ու մյուսները Սոբեսկու հայազգի երկու բանագնացներին շփոթել են։ Սիմոն Պետրովիչը Պարսկաստան է եկել 1690 թ., իսկ 1696 թ. Նահապետ կաթողիկոսին Սոբեսկու նամակը բերող բանագնացի անունն է Շիմոն Բեգրոսովիչ[8]։ Երկրորդ՝ Բարոնչի բերած աղբյուրներում նշված չէ, թե Բեգրոսովիչը ուղարկվել էր նաև պարսից շահի մոտ։ Բարոնչը տալիս է միայն կաթողիկոսի անունը, որը տվյալ դեպքում ներդաշնակ է Վ. Լոզինսկու այն ճիշտ ենթադրությանը, թե Սոբեսկին Հայաստանի թագավորությունը վերականգնելու իր մտադրությունները հասկանալի պատճառով գաղտնի էր պահում շահից։ Եվ, վերջապես, Նահապետ Եգեսացուն հղած Սոբեսկու նամակում մի փոքր այլ կերպ են ներկայացված Հայաստանի անկախությունը վերականգնելու Սոբեսկու առաջարկները, քան դա ներկայացնում է Հ. Քյուրտյանը։

Այս եզակի վավերագիրը կարևոր է ոչ միայն որպես հայ-լեհական քաղաքական շփումներին վերաբերող մեզ հասած առայժմ միակ փաստաթուղթ։ Նամակը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, թե ինչպես էին Հռոմն ու հակաթուրք դաշնակցության երկրները Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազատագրական բաղձանքները շահարկում՝ իրենց քաղաքական դիտավորությունները Թուրքիայում իրագործելու և նրանց կաթոլիկ եկեղեցու գերիշխանությանը ենթարկելու համար։

Նամակի 15 հիմնական կետերից 12-ը վերաբերում են հայերի դավանափոխությանն ու դրա հետ կապված այն գործողություններին, որոնք պետք է իրագործեր հայոց կաթողիկոսը։ Առաջին կետով կաթողիկոսին առաջարկվում է «ճանաչել սրբազան Օրթոդոքս միասնությունը Հռոմեական եկեղեցու հետ՝ համաձայն մեր կողմից իրեն ուղարկած նորմերի, որոնք ինչպես իր գերապատիվ նախորդներ Փիլիպոսին ու Հակոբին տրված են Ուրբանոս Է պապի հրամանով և իր ձեռամբ ստորագրված ու սեփական կնիքով կնքված ուղարկի մեզ, մենք էլ մեր թագավորական ձեռքով՝ Հռոմի կուրիային, միաժամանակ ճշմարտության ավելի մեծ ապացույցի համար բնագրին հավասարազոր պատճենը անհրաժեշտ ցուցումներով ու իր հաջորդների համար տրված երդումով պահի իր դիվանում»։

Նախ՝ նամակից երևում է, որ Բեգրոսովիչը ներ բերած է եղել նաև դավանության թելեր, որոնք պիսի ստորագրած ու կնքած են տաներ։ Երկրորդ՝ որ այդ «նորմերը» տարիներ առաջ ուղարկված էր եղել նաև Հակոբ Ջուղայեցուն, Եղիազար Այնթափցուն, իսկ ավելի վաղ՝ Փիլիպոս Աղբակեցուն։

Նամակը, այսպիսով, հաստատում է հայ և լեհ պատմաբանների այն տեղեկությունները, ըստ որոնց Սոբեսկին նամակագրական կապեր է ունեցել նաև վերոհիշյալ 2 կաթողիկոսների հետ։

---

7 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 351—352։

8 S. Baracz, Żywoty sławnich ormian w posce (այսուհետև՝ Ս. Բարոնչ, ժբ-վոտի), Lwow, 1859, s. 69. Նույնի՝ Ռբս Ջեյով, էջ 69։

Պատմագիտությանը լավ հայտնի է, թե հայազգի կաթոլիկ քահանաներ պատրաստելու համար Լվովում բացված «Պապական ճեմարանը» ինչ կարևոր դեր ունեցավ բռնի միության գործում։ Այս նամակում հստակորեն երևում է, որ Սոբեսկին լեհահայերին կաթոլիկացնելու փորձը ձգտում էր կիրարկել նաև Հայաստանում։ Նա առաջարկում է Կրակովի մոտ գտնվող Մարիամպոլ քաղաքում կաթոլիկ հոգևորականներ պատրաստելու նպատակով ճեմարան հիմնել «ի մպաստ արևելյան երիտասարդության, որը կրթություն ստանալու համար կգար տարբեր կողմերից» (կետ 2-րդ)։

Սոբեսկին չի բավարարվում Լեհաստանում նախատեսված այդ ճեմարանով։ Նա Նահապետ Եղեսացուն առաջարկում է «երիտասարդության դաստիարակության համար էջմիածնի ճեմարանում պահել Հիսուսյան միաբանության... աստվածաբաններ, որոնք մենք կհրամայենք ուղարկել մեծ քանակությամբ և ամեն ինչում կաջակցենք նրանց» (կետ 11-րդ)։

12-րդ կետը հայոց կաթողիկոսին պարտավորեցնում է հրամայել, որ «հայ եկեղեցիներից հանվեն, ոչնչացվեն և ապագայում մոռացության մատնվեն այն գրքերը, որոնք երբևէ գրվել են կեղծ ուսուցիչների (իմա՝ Հովհան Օձնեցու, Գրիգոր Տաթևացու և հայադավան եկեղեցու մյուս գործիչների—Ռ. Հ.) կողմից... Ապա կաթողիկոսը թող հրամայի ուղղել կատկածելի գրքերը... և հանձնի տպարան, որը... մեր թագավորության գումարներով կստեղծենք... հիշյալ զիմնազիայում և կհրամայենք տպագրել... գրքերը և կուղարկենք բոլոր հայկական եկեղեցիները»։ Նամակի մեջ Հայաստանի ազատագրության խնդիրը շոշափվում է 3-րդ և 6-րդ կետերում։

2-րդ կետում Սոբեսկին կաթողիկոսին խնդրում է, որպեսզի նա «հարմար մարդ ընտրի, որը արժանանա մեր հավանությանը՝ սույն նամակի համաձայն նախ և առաջ համապատասխան լինի նորին առաքելություն պապի նշած պարտականություններին ու հեղինակությանը և արժանի լինի կարդինալական թիկնոց ընդունելու, ինչպես և նորին մեծություն կայսեր պահանջներին իր և հետնորդների համար մեր միջնորդությամբ իշխանական տիտղոս ստանալու համար»։

Ինչպես տեսանք, Սոբեսկին 1680-ական թվականներին ևս հայոց կաթողիկոսից խնդրում էր մի հարմար թեկնածու առաջադրել կարդինալ օծելու համար։ Կարծում ենք Հակոբ Ջուղայեցու՝ մեզ չհասած նամակը ևս պիտի շոշափած լիներ այդ խնդիրը։

Նամակ—պայմանագրի 6-րդ կետում Յան Սոբեսկին նշում է, որ ինքը Պոլսից Հակոբ կաթողիկոսի 17 տարի առաջ ուղարկած մամակը «անհրաժեշտ հոգայությամբ» պահում է իր դիվանում։ «Թեև վաղուց, նրա վախճանից հետո նրա խոսքերը մոռացության են մատնվել ու մինչև այսօր... չեն իրականացվել, այդուհանդերձ մենք այն նորոգման և վերստին քննարկման ենք ներկայացնում, որպեսզի Ձերդ սրբազանությունը փորձի վերստանալ... հայկական թագավորության թագը և կարողանա միավորել քրիստոնյա տիրակալների աջակցությունը, միաժամանակ մանրամասն նկարագրել այն վայրերը, որտեղով քրիստոնեական զորքերը կարող են հաջողությամբ հասնել Հայաստան, հայտնել, թե ինչ քանակությամբ զինվորներ կարող է ունենալ, կամ գուցե ոչինչ չունի. թող հայտնի նաև կարո՞ղ է հոգալ բանակի ծախսերը։ Եվ թող Ձերդ սրբազանությունը նամակով դիմի... Ֆրանսիայի քրիստոնյա միապետին և մյուս տիրակալներին և խնդրի նրանց օժանդակությունը, իսկ մենք... հայտարարում ենք, որ ամբողջ Ռեչ-Պոսպոլիտայի և մեր ժառանգների հետ միասին այդ բոլորին զորավիգ կկանգնենք և մեր ամբողջ զինված ձեռքով կօգնենք այդ գործին, հենց որ ընդհանուր համաձայնությամբ քրիստոնեական արյուն ունեցող որևէ իշխան ընտրվի պետության բախտի տնօրեն, ժառանգորդ և տիրակալ»։

Այստեղից ճշտվում է ոչ միայն Սոբեսկուն հղած Հակոբ Ջուղայեցու նամակի թվականը (1679), այլև պատկերացում տալիս այդ նամակի մոտավոր բովանդակության մասին։

Նամակի այս հատվածը մեր ձեռքի տակ եղած մի քանի այլ անուղղակի փաստերին համադրելիս, պարզվում է հայ ազատագրական շարժման գործիչների և լեհական արքունիքի միջև կայացած բանակցություններին վերաբերող ևս մի շատ կարևոր հանդամանք, որը վրիպել է հայ պատմագիտության ուշադրությունից։ Խոսքն այստեղ լեհահայերից զինված ջոկատներ կազմելու և Հայաստան ուղարկելու մասին է։ 1667 թ. Հակոբ Ջուղայեցին Պոլսում հանդիպում է Սոբեսկու հայազգի բանագնաց Ն. Բայդուլովիչին, որին ճանաչում էր դեռևս 1662 թ., երբ նա գտնվում էր Էջմիածնում և որտեղից, «արևելյան տեղեկություններով հարստացած», վերադարձել էր Լվով[9], Հայադավան եկեղեցին Հռոմին հպատակեցնելու գնով Հայաստանի ազատագրության գործը այնքան հասունացած և իրական էր թվում Հակոբ Ջուղայեցուն, որ նա 1676 թ. «անթիվ ժողովրդեան առաջ» Էջմիածնի մայր տաճարում հպատակություն է հայտնում Հռոմի պապին։ Դրանից մեկ տարի անց Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունում որոշում է ընդունվում հայրենիքը ազատագրելու գործը գլուխ բերելու համար դիմել Հռոմի պապին ու արևմտյան տերություններին։ 1678 թ. Ջուղայեցին Հռոմ է ուղարկում Նախիջևանի կաթոլիկ թեմի առաջնորդ շոռոտցի Առաքել Բոպիկ (բոկոտն) հայ վարդապետին։ Նույն թվին նրա գլխավորած պատվիրակությունը հասնում է Պոլիս, որտեղ Ջուղայեցին հանդիպում է Սոբեսկու հայազգի դեսպանին։ Դրանից հետո, 1679 թ. Պոլսից նա Սոբեսկուն նամակ է հղում, որը լեհ թագավորը «անհրաժեշտ հոգացողությամբ» պահում էր իր դիվանում։

Նահապետ կաթողիկոսին հղած Յան Սոբեսկու նամակի վերոհիշյալ հատվածից պարզ երևում է, որ Լեհաստանի թագավորը նպատակ ուներ ընթացք տալ իր և Ջուղայեցու համատեղ մշակած ծրագրին։ Ծրագիրը Հայաստանի թագավորությունը վերականգնելու համար լեհական զորքերի ներխուժումն էր Տաճկահայաստան և կաթողիկոսի առաջադրած ու Հռոմի պապի հավանությանն արժանացած թեկնածուին հայոց թագավորության թագին բազմեցնելը։ Հետևաբար Հակոբ կաթողիկոսի նամակը մոտավորապես նույն հարցերի մասին է եղել, ինչ որ Նահապետ Օգեսացուն հղած Սոբեսկու նամակը։

Գերմանական աղբյուրներից Ս. Բարոնչի քաղած այն տեղեկությունը, թե 1683 թ. Վիեննայի ճակատամարտին լեհ-ավստրիական զորքերի շարքում «սեփական մուշկետներով, համազգեստով ու դրոշակներով» կռվում էին հինգ հազար հայ ռազմիկներ[10], մեզ շատ հետաքրքիր ենթադրություններ է մղում։

Հանգամանորեն կանգ առնենք այս տվյալի վրա, որովհետև այն հայ պատմագիտություն է մուծվել միջնորդ աղբյուրների միջոցով՝ շատ թռուցիկ ու անորոշ։

Սոբեսկու բանակում հինգ հազար հայ զինվոր լինելու մասին տվյալը մեզ է հասել լեհական Սիլեզիայի (լեհերեն՝ Շլյոնսկ) Գլիվիցե քաղաքի մոտ գտնվող Պաչընն բնակավայրում ապրած զինվորական թղթակից Լեոպոլդ Ալբրեխտ Պաչընցու մի նամակի միջոցով, որը անծանոթ է հայ պատմագիտությանը։ 1683 թ. օգոստոսի 27-ին գրված այդ գերմաներեն նամակ-ղեկուցագրում նկարագրվում է Սոբեսկու զորքերի կազմը և տեղաշարժը։ Նամակի բնագիրը մինչև երկրորդ աշխարհամարտի սկիզբը գտնվում էր Գլիվիցեի (Լեհաստան) քաղաքային դիվանում, բայց պատերազմի ընթացքում այլ փաստաթղթերի հետ միասին կորել կամ ոչնչացել է։ Սակայն բարեբախտաբար անցյալ դարի քսանական թվականներին գերմանական Fon und für Schleisen թերթում հրապարակվելուց հետո նամակը վերահրատարակվել է տարբեր թերթերում, մենագրություններում և առանձին հոդված-

9 Ս. Բարոնչ, ժվոտի, էջ 57։

10 Ս. Բարոնչ, Ռուս ջեյուվ, էջ 68։

ներում թե՛ գերմաններեն, թե՛ լեհերեն թարգմանությամբ[11]։ Հայերի մասին եղած հատվածը ընդամենը մեկ նախադասություն է։ Ահա այն. «Կան նաև հինգ հազար հայեր*, որոնք ցուցակագրված-արձանագրված չեն**։ Նրանք ունեն երկար կարմիր գլխարկներ, կարճ կարմիր անթև կապաներ և երկար տաբատներ, ինչպես վալաքները։ Նրանց զենքը մուշկետն է ու տապարը, իսկ բոլոր վաշտերը ունեն դրոշներ և սուրբ խաչի նշանով վառեր»[12]։

Ինչպես ասացինք, այս փաստը մեզ շատ համարձակ ենթադրությունների է մղում։

Կարծում ենք՝ Հակոբ Ջուղայեցու 1679 թ. նամակում պետք է, որ խոսք եղած լիներ նաև Լեհաստանում կազմակերպվելիք հայկական զինվորական ջոկատի մասին, որը պետք է կազմեր Թուրքիա ներխուժելիք լեհ-հայկական զորքերի միջուկը։ Իսկ այդ 5000-անոց ջոկատը հնարավոր չէր կազմել զուտ լեհահայերից, քանի որ մեր ձեռքի տակ եղած հավաստի աղբյուրների պնդմամբ XVII դարակեսին 11 միլիոնանոց[13] Լեհաստանի թագավորությունում հայաղավան հայերը կազմում էին բնակչության 0,023 %-ը[14] միայն (2530 հոգի)***։ Ըստ 1633 թ. նոյեմբերի 29-ի մի փաստաթղթի (լվովահայերի բողոքը Լվովի դատարանին) Ռեչ Պոսպոլիտայի ամենահայաշատ գաղթավայր Լվովում ու շրջակա բնակավայրերում այդ թվին ապրում էր «մոտավորապես մեկուկես հազար հայաղավան հայ»[15]։ Եթե դրանց դումարելու լինենք նաև կաթոլիկացած հայերին, որոնք շատ քիչ են եղել, ապա մեր կարծիքով այդ ժամանակ լեհահայության թիվը չորս հազարից չէր անցնի։ Հետևաբար նրանք չէին կարող այդքան զինվոր տալ։ Սակայն այսուամենայնիվ հայերը, մեր կարծիքով, հնարավորություն ունեին ապահովել 5000 զինվոր։ Մենք հենվում ենք հետևյալ փաստերի վրա։

Լեհ պատմաբանները միաբերան նշում են, որ Լեհաստանի ցամաքային առևտուրը XV դ.—XVIII դ. սկիզբը հայերի ձեռքն էր։ Ցամաքային առևտուրը կատարվում էր քարավանների միջոցով, որոնց պետերը «միշտ հայեր էին և այնպիսի իշխանություն ունեին քարավանի վրա, ինչպես նավապետը

---

[11] Goniec Krakowski, 14. 09. 1829, № 137; Zbieracz literacki, t. 4, Kraków, 1838, s. 94—96; *Որը ջեյուվ, էջ 68-ի ծանոթ. մեջ։* R. Kaleta, Sensacje z dawnych lat, Wrocław—Warszawa—Kraków—Gdansk, 1974, s. 304—305; Fr. German, Król Jan 3 Sobieski na Slasku w drodze pod Wiedeń, Gliwice, 1983, s. 36—38; Sobieski w Gliwicach Raciborzu (Świat i Życie *(հանդես)*, Katowice, 19 wrzesnia 1948, rok 3 № 6) *և այլն։*

* *Որոշ պատմաբանների կարծիքով հայերը հինգ հազար զինվոր չէին կարող տալ։ Պարզապես նամակագիրը անզգուշությամբ մեկ զրոն ավել է գրել և 500-ի փոխարեն ստացվել է 5000 (տե՛ս* J. Wagilliewicz, Ormianie w Polsce, kilka slow z powodu ksiadza Baracza (Czas, Krakow, 1858, № 80, s. 1); *Նման ենթադրություններն, իհարկե, անհամոզիչ ու անհիմն են։*

** *Ցուցակագրված-արձանագրվածները* (Specyfikowani) *այն զորամասերն էին, որոնք սերմի որոշմամբ վարձատրվում էին պետական գանձարանից։ Քանի որ հայոց զորախմբերը արձանագրված չէին Յան III Սոբիսկու զորքերի ցուցակներում, նշանակում է նրանք կամ իրենց ծախսերով կամավորներ էին, կամ ինչ-որ ոչ պետական աղբյուրներից էին փող ստանում։*

[12] Zbieracz literacki, t. 4, s. 96.

[13] Encyklopedia Powszechna, PWN, Warszawa, 1975, s. 58.

[14] Tygwdnik powszechny *(շաբաթաթերթ)*, 1970, № 15, Krakow.

*** *XVII դարասկզբին Լեհաստանում 2530 հոգի հայաղավան բնակիչ լինելու կարծիքը հավանական է, որովհետև ըստ մեզ հասած բազմաթիվ տվյալների լեհահայերին կաթոլիկացած Թորոսովիչի հալածանքներին չդիմանալով, 1630—1640-ական թթ. հարյուրավոր հայ ընտանիքներ լքեցին Լեհաստանը։*

[15] ЦГИА в Львове, ф. 9, оп. 1, т. 343, с. 1970/*հմմտ.* Украино-армянские связи 17-го в., Киев, 1969, с. 6.

ծովում»[16], միաժամանակ նշվում էր, որ այդ ճանապարհները հղի էին բազում դժվարություններով ու մահվան վտանգներով, քանի որ հաճախ ենթարկվում էին ավազակային հարձակումների, և «հայերը հաճախ վտանգավոր պայքարների գնով էին իրենց քարավանները առաջնորդում լվով»[17]։

Ցամաքային առևտրի դերի բարձրացման պայմաններում, որը սկսվեց Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից (1453 թ.) և ծովային ճանապարհները փակվելուց հետո, Լեհաստանը (նաև այլ տերություններ) սկսեց մեծ նշանակություն տալ քարավաններին և դրանց հետ կապված ծառայություններին։

Այս ու այլ բազմաթիվ տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ հայ վաճառականները իրենց կյանքը և քարավանները պաշտպանելու համար ոչ միայն զինված էին, այլև ունեին զինյալ խմբեր։ Իսկ նրանց զինված խմբերը կարող էին համալրվել նաև լեհահայ վաճառականների՝ պարսկահայ, Թուրքահայ, դրիմահայ և այլ գործընկերների հավաքագրած հայերով։ Քանի որ, ըստ անառարկելի տվյալների, հայ վաճառականությունը ընդհանրապես միշտ էլ գործուն օժանդակություն է ցուցաբերել ազատագրական շարժմանը, մեծապես օգնել ազատագրական շարժման դրածիչներին, ապա զինված խմբերի կազմավորումը մի անսովոր ու անիրագործելի բան չէր նրանց համար, մանավանդ որ նրանք ամենաարձր պաշտոնական շրջանակներից անընդհատ հուսադրվում էին եվրոպական թագավորների ձեռքով Հայաստանն ազատագրելու շատ իրական թվացող խոստումներով։ Լեհահայ գաղութի թե՛ հայ, թե՛ օտար պատմաբանները նշում են, որ հայերը XI—XVII դդ. Ռութենիա և Լեհաստան են մտել իբրև «սրով իրենց ճամփան հարթող ասպետներ» և որ նրանք XI դ. սկսած մինչև Գրյունվալդի (1410), Վառնայի (1444) ճակատամարտերը և դրանից հետո էլ միշտ սեփական զորախմբով օգնել են Ռուսիայի իշխաններին, Լեհաստանի և Ռումինիայի թագավորներին, սեփական զորախմբով մասնակցել զանազան քաղաքների պաշտպանությանը։ Ուստի կարելի է պնդել, որ Սոբեսկու զորքերի մեջ կռվող հայերի հինգ հազարանոց ջոկատը համալրվել է տարբեր վայրերից գուցե և Հայաստանից գնացած հայերե հաշվին։ Հայաստանից հարյուրավոր մղոններով հեռու մի երկրում զինվորական միավորում ստեղծելու, զինելու, հանդերձավորելու և պահելու համար հարկ պիտի լիներ հսկայական դրամական միջոցներ ու ժամանակ պահանջող նախապատրաստական-կազմակերպչական յուրց աշխատանք։ Իսկ պարտքերի մեջ թաղված էջմիածինը հնարավորություն չպիտի ունենար հոգալու այդ հսկայական ծախսերը։ Հատկանալի է՝ այդ ծախսերը պետք է հոգար ազատագրական շարժման մեջ ներգրավված հասարակականորեն ազդեցիկ վաճառականությունը, որ այդ դեպքերից մոտ 40 տարի անց պատրաստակամություն հայտներ Դավիթ-Բեկին օգնության հասցնել հարյուրավոր ռազմիկների[18]։ Եթե նկատի ունենանք, որ հայ ռազմիկները Վիեննայի տակ կռվում էին սեփական զենքուղրահով և դրոշակներով, իսկ Սոբեսկու և հայոց կաթողիկոսների միջև կայացած բանավարություններում հատուկ ուշադրություն է դարձվել Թուրքիս մտնող եվրոպական զորամասը հայ ռազմիկներով համալրելու հանգամանքին (տե՛ս Սոբեսկու նամակի 6-րդ կետը), ապա վերոհիշյալ վարկածները կարելի է ընդունելի համարել։

---

[16] Wl. Lozinski, Patrycyat i mieszczanstwo Lwowskie, s. 270; տե՛ս նաև՝ Katalog dokumentow tureckich, opracowal Z. Abrahamowicz, Warszawa, 1959, dok. 8, s. 26.

[17] Ս. Բարոնչ, Որս չեյով, էջ 265։ Jozef Bartlomeja Zimorowicza pisma do dziejow Lwowa odnoszace sie, wydal K. Heck, Lwow, 1899, p. 208; Զ. Օբերտընսկի, Լեհահայերը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը (Հանդես ամսօրյա, 1962, N 1—4, էջ 91—93)։

[18] Վ. Պարսամյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ-Բեկի ապստամբությանը, Երևան, 1962, էջ 65—73, 99—100, 103—104, 146 և այլն։

Այսպիսով՝ ազատագրական ակնկալիքներով հայ-լեհական ռազմաքաղաքական զինակցության մասին մեր թուցիկ ակնարկից երևում է, որ այդ զինակցությունը միանգամից չի ծլել խոպան ասպարեզում։

Ազատագրական ակնկալիքներով հայ-լեհական շփումները սկսվում են դեռևս XVI դ.՝ Սիգիզմունդ II և Ստեֆան Բատոր թագավորների ժամանակներից և զարգանալով որոշակի տեսք են ստանում Փիլիպոս կաթողիկոսի օրոք, որի շնորհիվ էլ սկսվում է ձևավորվել հայ ազատագրական շարժման լեհական կողմնորոշումը։ XVII դ. Եվրոպայում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները մի կողմից, Թուրքերի դեմ ռազմական մի քանի խոշոր հաղթանակներ տարած Յան Գ Սոբեսկու Լեհաստանի հաջողությունները մյուս կողմից, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին մղում են Լեհաստանի հետ աշխույժ բանավարությունների, որոնք XVI դ. կրում էին պատահական և թուցիկ բնույթ, որովհետև այդ դարի հայ ազատագրական միտքը հիմնականում սնվում էր Օսմանյան կայսրության հետ զինաբախումների մեջ գտնվող և Եվրոպայի ազդեցիկ տերություններ հանդիսացող Վենետիկի, ապա Ֆրանսիայի խոստումներով։ XVII դ. ուժերի վերադասավորությունն ու քաղաքական իրադրության փոփոխությունը հայ-լեհական զինակցության համար իրական նախադրյալներ են ստեղծում։ Հակոբ Ջուղայեցին շարունակելով իր նախորդի սկսած գործը, 1660-ական թվերից սկսած, գործնական կապերի մեջ է մտնում Լեհաստանի հետ, որը 1680-ական թթ., արդեն իր հաջորդ կաթողիկոսի օրոք, դառնում է քաղաքական զինակցություն։

Նորից դառնալով Սոբեսկու 1696 թ. հունիսի 2-ի նամակին, պետք է նշենք, որ սերբական փոքրիկ քաղաք Կառլովիցում կնքված հայտնի զինադադարից 3 տարի և Սոբեսկու մահվանից 15 օր առաջ գրված նամակը, լինելով հայ ազատագրական շարժման պատմության լեհական կողմնորոշմանը վերաբերող եզակի մի վկայական, միաժամանակ այդ դիմահակության մայրամուտն է նշանավորում, որովհետև եթե 1680-ական թվերի Եվրոպայի ազդեցիկ պետություններից մեկը հանդիսացող Լեհաստանն իր քաղաքական շահերից ելնելով կարող էր նման ծրագրեր փայփայել, ապա 1690-ական թվականների վերջերին, նա արդեն այն երկիրը չէր, որ կարողանար իրագործել՝ լեհ պատմաբանների խոսքերով ասած, «ֆանտաստիկ» այնպիսի արշավանք, ինչպիսին խոստանում էր։

АРМЯНО-ПОЛЬСКИЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ СВЯЗИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XVII в.

Р. А. АМБАРЦУМЯН

Резюме

Начатые в XVI в. армяно-польские контакты по вопросу освобождения Армении вылились во второй половине XVII в. в военно-политические сношения. Доказательством этого является участие 5-тысячного военного отряда армян в битве под Варной в 1683 г. в составе польско-австрийской 74-х тысячной армии, а также письмо польского короля Яна III Собеского от 2 июня 1696 г. католикосу всех армян Наапету Едссаци.